

## Արձանագրություն հ.4

---

ԵՂՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի  
02.06.2016 թ. կայացած նիստի:

Նիստին ներկա էին գիտխորհրդի 37 անդամներից 34 -ը: Նիստին ներկա էին նաև <<Տեսական և ընդհանուր տնտեսագիտության>> և <<Միջազգային տնտեսական հարաբերությունների>> ամբիոնների աշխատակիցները:

### Օրակարգում՝

1. Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի կառուցվածքում փոփոխություններ կատարելու մասին հարցը (զեկուցող՝ դեկան՝ Հ.Սարգսյան):
2. Ուսումնական խորհրդատուների (կուրատորների) մասին (զեկուցող՝ դեկանի տեղակալ Կ.Եղոյան):
3. Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների արդյունքները (զեկուցող դեկանի տեղակալ Գ.Բարխուդարյան)
4. Ընթացիկ հարցեր:

Մինչև նիստը սկսելը ներկաները ողջունեցին ֆակուլտետից ԼՂՀ առաջնագծում մարտերին մասնակցած առկա և հեռակա ուսուցմամբ ուսանողներին ( Ավետյան Վարդան, Գրիգորյան Ադասի, Ղազարյան Հովհաննես, Պետրոսյան Գարեգին, Օթարյան Մհեր, նշվեց, որ նիստին ներկա չէ, որովհետև ծառայությունը շարունակում է մարտական խաչի 2-րդ աստիճանի շքանշանակիր Շուլի Հակոբյանը): Ֆակուլտետի դեկան Հ.Սարգսյանը երախտագիտության խոսք ասեց նոր սերնդի ներկայացուցիչներին և շնորհակալություն հայտնեց նրանց ու բարեմաղթեց հետագա հաջող ուսումնառության ընթացքում:

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Հ.Սարգսյանը:

Զեկուցողը ներկայացրեց ֆակուլտետի <<Տեսական և ընդհանուր տնտեսագիտության>> և <<Միջազգային տնտեսական հարաբերությունների>> ամբիոնների միաձուլման վերաբերյալ նախագիծը: Մասնավորապես հիմնավորվեց տնտեսագետ կադրերի պատրաստման որակի բարձրացման, բակալավրիատի երեք մասնագիտությունների (տնտեսագիտություն, կառավարում, ֆինանսներ) հիման վրա մագիստրոսական մասնագիտացումների կազմավորման, պրոֆեսորա-դասախոսական կադրերի առավել ռացիոնալ տեղաբաշխման և գիտահետազոտական աշխատանքների կատարման արդյունավետության բարձրացման տեսանկյունից նշված երկու ամբիոնների միաձուլման անհրաժեշտությունը:

## **Արտահայտվեցին:**

**Գ.Ղարիբյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:** Նա ասաց, որ ամեն մեկը, ով պաշտոն է ստանում, պետք է պատրաստ լինի այն թողնելու և դրան պետք է գիտակցաբար մոտենալ: Դեկանի կողմից ներկայացված նախագծի օգտին խոսող փաստարկներ կան, որոնցից առաջինը բակալավրիատում մասնագիտացումներն են, որոնցից մեկը տնտեսագիտությունն է, որն ավելի արդյունավետ կգործի երկու ամբիոնները միացման դեպքում: Երկրորդ, երկու ամբիոնների միացումը նպատակ է հետապնդում լուծելու մագիստրոսական ծրագրերի համալրման հարցը: Երրորդ՝ ընդունելությունը կազմակերպելիս ավելի արդյունավետ հավաքագրում կլինի: Նրա կարծիքով դեկանի առաջարկը հիմնավորված է և պետք է հավանություն տալ:

**Մ.Միքայելյանը (<<Տեսական և ընդհանուր տնտեսագիտության>> ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր)** ասաց, որ պաշտոնն իր համար երբեք խթանիչ դեր չի ունեցել և նա հրաժարվում է ամբիոնի վարիչի իր պաշտոնից և տեղը զիջում է ավագ գործընկերոջը՝ Թ.Թորոսյանին:

**Լ.Խաչատրյանի (<<Տեսական և ընդհանուր տնտեսագիտության>> ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.)** կարծիքով այդպիսի որոշման ընդունումը կթուլացնի ֆակուլտետի ներուժը, ընդհակառակը ֆակուլտետը պետք է ընդլայնման ուղղությամբ ծավալի իր գործունեությունը:

**Հ.Հովհաննիսյանը (<<Միջազգային տնտեսական հարաբերությունների>> ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.)** առաջարկեց <<Միջազգային տնտեսական հարաբերությունների>> ամբիոնին առաջադրանք տալ, եթե ամբիոնը չի կարողանա հաղթահարել ռուբլյոնը, նոր այդ դեպքում կարելի է գնալ նման քայլի: Նա հիմնավորեց, որ իրենց ամբիոնի պրոֆիլը աշխատաշուկայում դիրքավորվածություն ունի և չի կարելի այն կորցնել:

**Ա.Դարբինյան ( ՀՀ ԿԲ խորհրդի անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր):** Լրիվ համամիտ եմ դեկանի ներկայացրած նախագծին և առաջարկում եմ նոր ամբիոնի անվան մեջ ներառել միջազգային բառը:

**Ա.Առաքելյանը (<<Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման>> ամբիոնի վարիչ, տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր)** նշեց, որ ֆակուլտետը երեք հիմնական մասնագիտություններով կարող է ընդունելություն կազմակերպել, դրանք են՝ տնտեսագիտությունը, կառավարումը և ֆինանսները: Նկատի առնելով, որ կառավարման և

գործարարության ու ֆինանսների ամբիոններն առկա են, ապա նշված երկու ամբիոնների միացումը նպատակահարմար եմ համարում:

**Հ.Մնացականյանը (Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ)** ներկաների ուշադրությունը հրավիրեց երեք հիմնարար դրույթների վրա, առաջին, որ ֆակուլտետի կոլեկտիվը միշտ միասնական է եղել և ցանկացած որոշման պայմաններում մարդկային հարաբերությունները պետք է բարձր մակարդակի վրա մնան: Երկրորդն այն է, որ նոր թափով պետք է աշխատել՝ ապահովելով ավելի բարձր որակ: Երրորդ, որ ցանկացած աշխատանք պետք է գնահատվի ըստ արժանվույն, այսինքն միավորման դեպքում աշխատակիցները չպետք է տուժեն: Այս նախագծի իրագործման դեպքում մեր „Ֆինանսներ,, մագիստրոսական ծրագիրը կհայտնվի մրցակցային պայմաններում, որը կնպաստի ուսուցման որակի բարձրացմանը:

**Ա.Մարկոսյանը (ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի տեղակալ, տ.գ.դ., պրոֆեսոր)** նշեց, որ մասնագիտությունների միջազգային դասակարգչի համաձայն միջազգային տնտեսական հարաբերությունների դասիչ որպես այդպիսին գոյություն չունի, քանի որ վերջինս տնտեսագիտության բաժիններից մեկն է: Նա առաջարկեց որոշման մեջ գրել ոչ թե միավորում, այլ միաձուլում, որովհետև միավորման դեպքում, ինչպես այստեղ հնչեց, մեկի իրավունքը փոխանցվում է մյուսին:

**Թ.Թորոսյանն (<<Միջազգային տնտեսական հարաբերությունների>> ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր)** ասաց, որ միավորում կլինի, թե միաձուլում, միևնույնն է իր համար երկու դեպքում էլ, ինքը հրաժարվում է ամբիոնի վարիչությունից: Նա իր գոհունակությունը հայտնեց նոր ամբիոնի անվան մեջ իրենց ամբիոնի անվանումը պահպանելու առիթով:

**Հ.Սարգսյան (Ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր):** Այսօր տեսակետները, ի տարբերություն նախորդ օրվա մեր քննարկումների, փոխվել են և ես ուրախ եմ, որ իմ գործընկերները հակառակ արհեստածին փաստարկներ չեն բերում:

**Ա. Մարտիրոսյան (<<Տեսական և ընդհանուր տնտեսագիտության>> ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.):** Քանի որ նշվեց 3 մասնագիտացումները, ապա տեսական եմ առաջարկում՝ ապագայում տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնը նույնպես ընդգրկել տնտեսագիտության մեջ, որովհետև մոդելները վերջիվերջո կիրառվում են տեսական դրույթներում:

**Ա.Մաքունց (Մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի):** Ես ցանկանում եմ արտահայտել ուսանողների կարծիքը, մենք հույս ունենք, որ նորաստեղծ ամբիոնն ավելի լավ կաշխատի:

**Վ.Բոստանջյան** (<<Ֆինանսահաշվային>> **ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ.**) Կառավարման բնույթի փոփոխությունները որպես այդպիսին, միանգամից ընկալելի չեն լինում, սակայն պետք է ասել, որ երկու ամբիոնի վարիչներն էլ շատ բարձր մակարդակի գիտնականին հարիր պահվածք ցուցաբերեցին և ես կուզենայի որ փոփոխություններից հետո ոչ մեկը դիսկուսիոն չզգար: Մինչև նիստը բոլորիս մոտ էլ անհանգստություն կար, բայց այժմ այն փարատվեց:

**Հ.Սարգսյան (Ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր)** Ես շնորհակալ եմ գիտխորհրդի բոլոր անդամներից բովանդակալից և օբյեկտիվ քննարկում ծավալելու համար: Իսկ այժմ որոշենք՝ քվեարկությունը բաց ենք անում, թե փակ: Նիտը որոշեց անցկացնել բաց քվեարկություն:

**Որոշեցին:** Առաջնորդվելով ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի կանոնադրության 24-րդ կետի 5-րդ ենթակետով, ֆակուլտետի գիտխորհուրդը ԵՊՀ ռեկտորին առաջարկություն է ներկայացնում..

1. Վերակազմավորել միաձուլման եղանակով <<Տեսական և ընդհանուր տնտեսագիտության>> և <<Միջազգային տնտեսական հարաբերությունների>> ամբիոնները:
2. Նորաստեղծ ամբիոնն անվանել <<Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների >> ամբիոն:

Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ: Գիտխորհրդի 37 անդամներից նիստին ներկա էին 34-ը: Որոշմանը կողմ են քվեարկել 32-ը, դեմ չկա, ձեռնպահ՝ 2-ը (գիտխորհրդի անդամ ուսանողներ):

Օրակարգի 2-րդ և 3-րդ հարցերի մասին զեկուցեց դեկանի տեղակալ Գ. Բարխուդարյանը: Նա ներկայացրեց ուսումնական խորհրդատուների վերաբերյալ ֆակուլտետի կողմից մշակված և ԵՊՀ կանոնակարգային հանձնաժողովին ներկայացված <<Կարգի>> դրույթները և առաջարկեց ամբիոններին՝ ելնելով դրանցից հաշվետվություն ներկայացնել իրենց ամբիոնների գծով կուրատորների աշխատանքի վերաբերյալ: Նա նաև առաջարկեց ամբիոններում քննարկել դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների արդյունքները, որոնք տրամադրված են ամբիոններին:

Գիտխորհրդի նախագահ  
տ.գ.դ., պրոֆեսոր

Հ.Լ.Սարգսյան

Գիտխորհրդի քարտուղար  
տ.գ.թ., դոցենտ

Ա.Հ.Համբարձումյան